ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Մ. ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պապիկյան.

Ի պատասխան Ձեր 17.02.2020թ. հ.02/036 գրության՝ տեղեկացվում է, որ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Մարգարյան փողոցի հ.35 հասցեում գտնվող 942.1քմ մակերեսով գույքը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 3262.25քմ մակերեսով հողամասը, Երևանի ավագանու 11.02.2020թ. հ.194-Ա որոշմամբ, անհատույց օգտագործման իրավունքով 5 տարի ժամկետով տրամադրվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Տեղեկացվում է նաև, որ քննարկվող գույքի մի հատվածը (երկու սենյակ) օգտագործվում է Աջափնյակ վարչական շրջանի «Գրադարանների կենտրոնացված համակարգ (ԳԿՀ)» ՀՈԱԿ-ի առաջին մասնաճյուղի կողմից՝ որպես գրադարան:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Մարգարյան փողոցի հ.35 հասցեում գտնվող գույքի համար վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի այլ պայմանագրեր առկա չեն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ